

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱՅՆԱՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՑ ԲԽՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Պատասխանատու մարմինը	Ֆինանսավորման աղբյուրը	Կատարման ժամկետը	Ակնկալվող արդյունքը
1	2	3	4	5	6
1.	Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգերի (ՀԿՏՀ) ներդրում ՀՀ քաղաքապետարաններում և գյուղապետարաններում	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (GIZ) (համաձայնությամբ) ՏԻՄ-եր (համաձայնությամբ)	GIZ-ի կողմից իրականացվող «Համայնքների զարգացումը Հարավային Կովկասում» ծրագիր	2014թ., հոկտեմբերի երկրորդ տասնօրյակ	ՀԿՏՀ-ի ներդրում թվով 70 գյուղապետարաններում: ՏԻՄ-երի կողմից կատարվող աշխատանքների արդյունավետության և մատուցվող ծառայությունների որակի բարձրացում:
2.	ՀԿՏՀ-ով ապահովված մոտ 150 համայնքներում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության գործարկում	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, ՏԻՄ-եր (համաձայնությամբ)	ՀՀ օրենքով չարգելված միջոցներ	2014թ., դեկտեմբերի առաջին տասնօրյակ	Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջև էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակման հնարավորության ապահովում

3.	<p>ՀՀ մարզպետարանների և ՏԻՄ-երի ներառում ՀՀ տարածքային կառավարման նախարարության պաշտոնական էլեկտրոնային փոստի ծառայության հասցեների միասնական տիրույթում</p>	<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, ՏԻՄ-եր (համաձայնությամբ)</p>	Ֆինանսավորում չի պահանջվում	2014թ., հունիսի առաջին տասնօրյակ	Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում պաշտոնական էլեկտրոնային փոստի հասանելիության ապահովում
4.	<p>Համայնքային պաշտոնական համացանցային կայքերի վարման օրինակելի կարգի մշակում և տրամադրում ՏԻՄ-երին</p>	<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն</p>	Ֆինանսավորում չի պահանջվում	2015թ., ապրիլի երկրորդ տասնօրյակ	Կայքերի վարման միասնական պահանջների և չափորոշիչների սահմանում
5.	<p>Համայնքային պաշտոնական համացանցային կայքերի վարման մշտադիտարկում իրականացնելու նպատակով ՏԻ ոլորտում գործող ՀԿ-ների ներկայացուցիչներից բաղկացած և հասարակական հիմունքներով գործող խորհրդի կազմավորում</p>	<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, տեղական ինքնակառավարման և խոսքի ազատության պաշտպանության ոլորտում գործող ՀԿ-ներ (համաձայնությամբ)</p>	Ֆինանսավորում չի պահանջվում	2015թ., հունիսի երրորդ տասնօրյակ	Համայնքների պաշտոնական կայքերի բովանդակության առկայության և դրանց հասանելիության ապահովման վերահսկում, կայքերի գնահատման օբյեկտիվության աստիճանի բարձրացում
6.	<p>Համայնքների պաշտոնական կայքերի պարբերաբար մշտադիտարկում՝ նրանց բովանդակային, գործառնական և տեխնիկական չափանիշներով</p>	<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ՀՀ մարզպետարաններ տեղական ինքնակառավարման և խոսքի ազատության պաշտպանության ոլորտում գործող ՀԿ-ներ (համաձայնությամբ)</p>	Ֆինանսավորում չի պահանջվում	Սկսած 2015թ.-ից, շարունակական	Համայնքների պաշտոնական կայքերի սպասարկման և դրանց հասանելիության նկատմամբ վերահսկելիության ավելացում
7.	<p>Համայնքների պաշտոնական կայքերի ամենամյա մրցանակաբաշխության սահմանում և կազմակերպում՝ ելնելով կայքերի մշտադիտարկման արդյունքներից</p>	<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ՀՀ մարզպետարաններ տեղական ինքնակառավարման և խոսքի ազատության պաշտպանության ոլորտում գործող ՀԿ-ներ (համաձայնությամբ)</p>	Ֆինանսավորում չի պահանջվում	Սկսած 2015թ.-ից, շարունակական	Կայքերի վարման արդյունավետության բարձրացում: Լավագույն կայքեր ունեցող ՏԻՄ-երի խրախուսում

8.	Համայնքային պաշտոնական կայքերի գրանցամատյանի ստեղծում և վարում	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում	2015թ., սեպտեմբերի առաջին տասնօրյակ	ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության և թափանցիկության բարձրացում
9.	ՀՀ մարզպետարանների պաշտոնական համացանցային կայքերում համայնքների վերաբերյալ առավել ամբողջական, հավաստի և արդիական տեղեկատվության առկայության ապահովում	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ մարզպետարաններ	Ֆինանսավորում չի պահանջվում	2014թ.-ից սկսած, շարունակական	ՀՀ համայնքներին վերաբերող տեղեկատվության հասանելիության ընդլայնում համացանցում
10.	ՏԻՄ-երում շահագործվող կառավարման տեղեկատվական համակարգերի գրանցամատյանի ստեղծում և վարում	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ մարզպետարաններ	Ֆինանսավորում չի պահանջվում	2015թ., մայիսի երկրորդ տասնօրյակ	Տեղեկատվական համակարգերի լիարժեք և անխափան շահագործման ապահովում, վերահսկելիության մակարդակի բարձրացում
11.	Քաղաքապետարաններում և գյուղապետարաններում կիրառվող համակարգային տեխնիկայի, տեղեկատվական համակարգերի և ցանցերի շահագործման օրինակելի կարգի մշակում և հաստատում, որի հիման վրա ՏԻՄ-երը կարող են ընդունել իրենց համայնքներում կիրառվող տեխնիկական միջոցների և տեղեկատվական համակարգերի շահագործման կարգերը	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ՏԻՄ-եր (համաձայնությամբ)	Ֆինանսավորում չի պահանջվում	2015թ., դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ	Քաղաքապետարաններում և գյուղապետարաններում շահագործվող համակարգային տեխնիկայի, տեղեկատվական համակարգերի և ցանցերի շահագործման արդյունավետության բարձրացում

